

**ՊԱՏՆԵՇ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ\***

**Բանալի բառեր** – պատնեշ-պետություն, Լեհաստան, Հայաստանի առաջին հանրապետություն, Սյունիք, նոր Ռուսաստան, նոր աշխարհակարգ:

Ազգերի կյանքում ուղենշային նշանակություն ունեցող գաղափարները ժամանակի ընթացքում չեն անհետանում, այլ հայտնվում են պատմության պահոցներում, բայց երբ արտաքին վտանգները նորից են առարկայանում, կրկին զգացվում է դրանց կարիքը:

Նոր ու նորագույն ժամանակներում նրանց շարքն է դասվել, այսպես կոչված, **պատնեշ-պետության** գաղափարը, որի առավել տիպական կերպավորումը՝ Մ. Տոլստաչևսկու «կարմիր հորդաների»՝ Եվրոպա ներխուժելու փորձը կասեցրած Յու. Պիլսուդսկու գլխավորած **Լեհաստանը**, 1920 թվականին գործեց մի այնպիսի հրաշք, որը նույն թվականին չհաջողվեց Հայաստանի առաջին հանրապետությանը ռուս-թուրքական կրկնահարվածի պատճառով:

*Բայց հայ իրականության մեջ պայրնեշ-պետության գաղափարն ավելի հին պայրնություն ունի: Դեռևս Մեծ Հայքի թագավորությունների գոյության շրջանում մենք ունեցել ենք հռոմեա-պարթևական և սապա պարսկա-բյուզանդական հակադիր ազդակները չեզոքացրած պայրնեշ-պետություններ: Իսկ շուրջ մեկուկես դար առաջ՝ 1878 թ., Բեռլինի կոնգրեսում այդ գաղափարն առաջադրվել է որպես Արևմտյան Հայաստանը ռուսական Սցիլլայի ու թուրքական Քարիբդայի արևմտում ձգնվելու հեռանկարից փրկելու՝ Մկրտիչ Խրիմյանի պարսկապետության ծրագիր: Նպարակր Մեծ Բրիտանիային Արևմտյան Հայաստանի ինքնավար կարգավիճակով շահագրգռելն էր դեպի Հնդկաստան փրկող ձանապարհը վերահսկելու առաջարկի միջոցով: Դա անմիջապես*

\* Ընդունվել է տպագրության 29.06.2023:

վե՛ր համահայկական հանդես, ԺԵ (ԻԱ) տարի, թիվ 2 (82), ապրիլ-հունիս, 2023

հանդիպեց Բեռլին այցելած Մ. Լոռիս-Մելիքովի՝ ռուսների ճանապարհը չփակելու նախագոյուցանանը, բայց չարաբասարիկ 1917 թվականին այդ ճանապարհը փլուզվեց մեր գլխին ռուսական պետության հետ միասին: Ուարի Մեծ եղեռնի և ապա Հայաստանի անկախացման հեղուկանքով միայն Արևելյան Հայաստանի Սյունիքի հարվածը՝ Լեռնահայաստանը, մնաց այն աշխարհաքաղաքական փարածքը, որը կարող էր սրանձնել պարսկերի դերը: Տարածաշրջան վերադարձող կարմիր ռուսները Սյունիքի երաշխավորող նամակով համաձայնեցին Սյունիքի փրկված հարվածը թողնել Խորհրդային Հայաստանի կազմում, բայց վերջին փարիներին նրանց ժառանգները կրկին փորձում են վերահասարակել այնպեղ: Մինչդեռ երբ Թուրքիան օգտագործում է Ռուսաստանի ղեկավարությանը որպես հայկական հողերի յուրացման գործիք, Սյունիքի կորուստը հավասարագոր է լինելու մեր կործանմանը:

**Հայկական ինքնիշխան պետության նոր ժամանակների իդեալը՝ Հայաստանի առաջին հանրապետությունը, մեր տարածաշրջանը ռազմակալած մայրցամաքային կայսրությունների թուլացման պայմաններում կարող է վերածնվել միայն որպես պատնեշ-պետություն:** Որովհետև 2020 թ. մեզ ծանր հարված հասցրած կայսերական Ռուսաստանի վերադարձի ճանփաները խցանվում են ուկրաինական պատերազմի ու ներքին խռովությունների պատճառով, իսկ Թուրքիայի, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցք» ծրագիրը նույնպես փակուղի է մտնում: 2020 թվականից հետո մի պահ թվում էր, թե դեպի «Մեծ Թուրան» ձեռք բացելու այդ մտադրության վրա Իրանի դրած վետոն հաղթահարելի է ԱՄՆ-ի ու Իսրայելի հետ Թեհրանի բարդ հարաբերությունները և Ռուսաստանի լենին-աթաթուրքյան «եղբայրական ներգրավումը» օգտագործելու միջոցով: Սակայն Իսրայելի միջուկային ֆոբիաներն ու ԽՍՀՄ մնացորդացի մեծապետական կարճամտությունն օգտագործելու փորձերից հետո Թուրքիայում սկսեցին հասկանալ, որ ԱՄՆ-ի նախաձեռնած իրանա-ամերիկյան շփումների աշխուժացումը փոխում է դրությունը: Գիտակցելով նման ստվերային գործընթացի հետևանքները՝ անցած մեկ տարվա ընթացքում Թուրքիան սկսել է շոշափել նաև Զինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրի «միջին ուղու» **զանգեզուրացման** հեռանկարները:

Նախկինում չինացիները նման հարցերում բավականին զգուշավոր էին, բայց «Մեկ ճանապարհ, մեկ ուղի» ծրագրի հիմնական՝ ռուսական երթուղու առջև դրված ուկրաինական արգելափակոցը մի

պահ սկսեց խախտել նրանց պասիվությունը: Ադրբեջանցի քաղաքագետներից մեկը վկայում է, որ դրանում իր դերն է ունեցել նաև Թուրքիայի նախագահական ընտրություններից առաջ Ռ. Էրդողանի հանձնարարությամբ Ղազախստան մեկնած Իլհամ Ալիևը: Վերջինս պետք է համոզեր **չինագետի** համարում ունեցող Ղազախստանի նախագահ Բ.-Ժ. Տոկանին իր վրա վերցնել «Ջանգեզուրի միջանցքի» հարցում Պեկինին շահագրգռելու գործը՝ ասպարեզ նետելով Չինաստանի ֆորպոստը դառնալու Թուրքիայի ցանկության մասին խայծը:

Տեսնելով, որ Ռուսաստանը հեռանկարում չի կարողանալու ապահովել Թուրքիայի ինքնություն խաղի թիկունքը և վաղ թե ուշ նախընտրելու է ԱՄՆ-ին, որը չի սպառնում նրա տարածքային ամբողջականությանը, Թուրքիայի ղեկավարությունը գաղտնի սիրախաղ սկսեց Չինաստանի հետ: Դա նպատակ ուներ նաև նրա միջոցով մեղմելու Իրանի կոշտ դիրքորոշումը Սյունիքի հարցում: Ուստի պատահական չէր, որ, իր վերընտրվելուց շատ չանցած, Բաքու այցելած Ռ. Էրդողանն ակնարկեց, որ հենց Իրանն է «Ջանգեզուրի միջանցքի» խոչընդոտը: Իրանը ստիպված էր պատասխանել, որ ինքը դեմ չէ այդ ծրագրին, եթե խոսքը վերաբերում է ոչ թե հողային հավակնությունների, այլ սոսկ կապուղիների ապաշրջափակմանը: Թուրքիայի պատասխան լուրջությունը ցույց տվեց, որ իրանական «եթե»-ն հիմքեր ունի:

Արտաքուստ թվում է, թե Սյունիքով անցնող ճանապարհի վերահսկողության հարցը միավորում է «համայն արևելից կողմանց» տիրակալներին՝ Ռուսաստանի ղեկավարությանը դարձնելով տարածաշրջանային կապալառու: Բայց տեղի է ունենում ճիշտ հակառակը. որքան շատ ջանք ու եռանդ են գործադրում մեր ոլիգերիմ հարևանները՝ Իսրայելին, Ռուսաստանին, իսկ վերջերս արդեն Չինաստանին իրենց թուրանական խաղերի գործիքը դարձնելու համար, այնքան շատ հակառակորդներ են ձեռք բերում՝ ի դեմս արևմտյան աշխարհի առանցքային խաղացողների: Որպես արդյունք՝ զանգեզուրյան, նույնն է թե՛ հայկական պատնեշի պահպանման խնդիրը տեղափոխվում է գլոբալ քաղաքականության օրակարգ՝ դառնալով սկզբունքային հարց Միացյալ Նահանգների, Եվրոպական միության ու նաև Իրանի և Հնդկաստանի համար: Իսկ դա նշանակում է, որ մեր զարմացած հայացքի առաջ Հայաստանի Հանրապետությունը սկսում է վերածվել մի

փոքրիկ պատնեշ-պետության, որի սյունյաց հաստվածի նշանակությունն ավելի մեծ է, քան նրա մնացած ողջ տարածքինը:

Պատճառն ակնհայտ է. Թուրքիայի հզորացման հեռանկարը մտահոգում է ոչ միայն նրա հարևաններին, այլև գլոբալ խաղացողներին, ինչի հետևանքով **փոքր երկրով մեծ ճանապարհ** բացելու վտանգը մեծացնում է նրա կարևորությունը **մեծերի աչքում**: Գլոբալ նշանակություն ունեցող հայկական պատնեշի ամրությունն ապահովելու խնդիրը ենթադրում է Արևմուտքի հիմնական խաղացողների ներգրավումը տնտեսական, քաղաքական ու նաև ռազմական առումներով: Նման պատնեշի վրա մնալու պարագայում Հայաստանն օժտվելու է այնպիսի ռազմական կարողականությամբ, որ առնվազն Ադրբեջանի հետ դիմակայության ընթացքում չի ունենա որևէ խնդիր: Անգամ պատերազմի միջոցով Սյունիքին տիրանալու պարագայում Թուրքիան չի կարողանա այն պահել իր ձեռքերում գլոբալ ուժերի համեմատ ունեցած փոքր հնարավորությունների պատճառով: Ավելին՝ համարձակություն ունենք պնդելու, որ Չինաստանն ինքն էլ առաջիկայում չի փորձի անմիջական թիկունք դառնալ Թուրքիային ԱՄՆ-ի հետ ունեցած աշխարհատնտեսական **մեծ առևտրի** պատճառով: Իսկ դա նշանակում է, որ ռազմավարական ապագա ունենալու համար Հայաստանին հարկավոր է Եվրասիա մայրցամաքի հիմնական հանգույցներից մեկը վերահսկելու **քաղաքական կամք**, քանզի պատնեշ-պետության վերածվելը կախված է ոչ թե մեր ուժի մեծությունից, այլ սեփական **դիմադրունակությունն** ապացուցելու վճռականությունից:

Հեռանկարում հայկական պատնեշ-պետությունը կարող է դառնալ նաև տարամիտված աշխարհաքաղաքական ազդակների նոր համադրության դաշտ, քանզի վերջին խռովության ընթացքում ԱՄՆ-ն ցուցադրաբար գերծ մնաց Ռուսաստանի անկառավարելի փլուզման սցենարը խթանելուց: **Նոր Ռուսաստանը** որպես պոտենցիալ դաշնակից դիտարկող գլոբալ ուժերը նրա մեջ տեսնում են մի կողմից՝ Թուրքիայի թուրանական նկրտումները, իսկ մյուս կողմից՝ Չինաստանի տնտեսական ծավալապաշտությունը սահմանափակող ուժ: Ուստի նոր Ռուսաստանի դժվարին երկունքի պայմաններում Թուրքիան ու Ադրբեջանը փորձում են առավելագույնը քամել ռուս-ամերիկյան թուլացող հակասություններից: Դրանից ակնհայտորեն նյարդայնացող Բաքուն մեկ գնդակոծում է Հայաստանի տարածքում ԱՄՆ-ի դրոշի

ներքո կառուցվող Երասխի գործարանը, մե՛կ շանտաժի է դիմում Արցախում դեռևս իր կամքը կատարող ռուս խաղաղապահների հանդեպ: Ադրբեջանի ղեկավարությանը համակած նյարդայնությունը ցույց է տալիս, որ մինչև ուկրաինական պատերազմի ավարտը մեր տարածաշրջանով շահագրգիռ ուժերը չեն ցանկանում ստատուս քվոյի հետագա փոփոխություն: Որովհետև «հետուկրաինական հեռանկարում» ԱՄՆ-ի ու Եվրամիության շահերը կարող են համադրվել նոր Ռուսաստանի նպատակների հետ՝ մեկ կրակոցով խոցելով միանգամից մի քանի թիրախ՝

ա) սառեցնել ուկրաինական պատերազմը, բայց Ռուսաստանի համար ապահովել սեփական դեմքը փրկելու հնարավորություն,

բ) պատժել իրեն բազմիցս դավաճանած Թուրքիային՝ Նախիջևանի ազատագրման միջոցով փակելով նրա թուրանական հավակնությունների ուղին,

գ) անհնարին դարձնել Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ձանապարհ» ծրագրի «միջին ուղու»՝ Սյունիքով անցնելու հեռանկարը,

դ) խորհրդանշական վայրով՝ Հին Ջուղայով բացել Հնդկաստան-Իրան-Եվրոպա առևտրային ճանապարհի երկաթուղային հանգույցը,

ե) Հայաստանը վերածելով պատնեշ-պետության՝ վերահսկելի դարձնել մայրցամաքային երեք տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի մրցակցության ու համագործակցության հանգույցը:

Այս հեռանկարն ամեննին էլ ապագայապաշտության ժանրից չէ. Չինաստանի հզորացմամբ գլոբալ մրցակցության հիմնական առանցքը դարձած Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ու Եվրոպայի միջև ուկրաինական, հայկական և այլ փականների տեղադրումով մեր տարածաշրջանում սկիզբ է առնելու **նոր աշխարհակարգի** ձևավորման գործընթացը, որի վճռական հանգրվանը լինելու է մեծ փականի՝ **Ռուսաստանի ազատությունն ու Հայաստանի վերածնունդը** որպես պատնեշ-պետություն:

Քանի որ Ուկրաինայում կրեմլյան ներկա վարչակարգի հաղթանակի սպասումներն անիմաստ են, իսկ Ռուսաստանի անկառավարելի փլուզմանը դեմ է հենց ինքը՝ ԱՄՆ-ը, ուստի **ամենահավանական սցենարը՝** Ռուսաստանի ազատությունն ու Հայաստանի վերածնունդը որպես պատնեշ-պետություն, սկսում է անհանգստացնել Թուրքիային: Կանխազգալով ռուսական վերնախավում ծավալվող պայ-

քարի «արևմտյան հանգուցալուծման» անխուսափելիությունը, Թուրքիան ՆԱՏՕ-ական հարթակում բեմականացնում է «անառակ որդու վերադարձը»՝ փորձելով առաջ ընկնել փակուղում հայտնված «մուկովյան ձեպընթացից»: Պատճառն ակնհայտ է. մոտենում է Լոզանի պայմանագրի 100-ամյակը, իսկ Թուրքիայի արևելյան սահմանները դեռևս ճանաչված չեն: Դրանց լեգիտիմացման, Հայոց ցեղասպանությունը մոռացության մատնելու և դեպի Մեծ Թուրան ճանապարհ բացելու համար Լոզանում մեկ անգամ արդեն Արևմուտքի անառակ որդին դարձած Թուրքիան տարված է մեր նոր գոհաբերության միջոցով **պատմության կրկնությունն** ապահովելու մոլուցքով: Հին հանցագործի՝ նախկին հանցագործության վայրը վերադառնալու ձգտումը, այսինքն՝ կրկնակի անառակությունը կարծես թե խրախուսվում է նաև **պատմական ինվարիանստի** անկրկնելիությունը «մոռացածների» կողմից:

Անշուշտ, մինչ ձախողված Լենինի ու չկայացած Աթաթուրքի ապահարզանը սա ձեռնառու է Վաշինգտոնին ու Վատիկանին: Խնդիրը նրանում է թե ինչ է լինելու դրանից հետո, երբ գլոբալ մակարդակով իրականացվող հայերի նահատակության կրկնաբեմականացման առաջին արարին հաջորդելու է **պատմության իմաստն** ըմբռնելու պահը, ինչն անհնարին է առանց մարտիրոսված նահատակների **հարության**:

Իսկ ներկա պահին դրան պատրաստվելու համար մեզ հարկավոր է պատնեշ-պետության տեսլականով առաջնորդվող քաղաքական իշխանություն և Արցախի ճանապարհային շրջափակումը **Քարվաճառի երկայնքով** ձեղքելուն ունակ բանակ:

**Խմբ.**

## **RAMPART-STATE VISION**

**Key words** - rampart-state, Poland, the First Republic of Armenia, Syunik, new Russia, the new world order.

## **ВИДЕНИЕ ГОСУДАРСТВА-ЗАСЛОНА**

**Ключевые слова** – государство-заслон, Польша, Первая республика Армении, Сюник, новая Россия, новый мировой порядок.